



Քննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային  
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի  
կառավարման խորհրդի  
« 03 » « 11 » 2016 թ. նիստում



Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային  
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի  
տնօրենի « 29 » « 12 » 2016 թ.  
թիվ <sup>494</sup>----- հրամանով



**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ »**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ**

**ՄԱՍԻ ԿԱՆՈՆՍԿԱՐԳ**

# 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) դաստիարակչական մասի (այսուհետ՝ դաստիարակչական մաս) կանոնակարգը սահմանում է դաստիարակչական մասի գործունեությունը, նպատակը, խնդիրները, իրավասությունները, գործառույթները, կառավարումը, դաստիարակչական մասի ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները:

1.2 Դաստիարակչական մասը գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, քոլեջի կանոնադրությանը, սույն կանոնակարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.3 Դաստիարակչական մասի նպատակն է համագործակցելով քոլեջի կուրսղեկների հետ կազմակերպել սովորողների դաստիարակչական աշխատանքներ, ինչպես նաև մասնակցել քոլեջի և սովորողի ընտանիքի սերտ համագործակցության ապահովմանը, նպաստել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու մասնագիտական կողմնորոշմանը, ինչպես նաև մարդասիրությանն ու հայրենասիրությանը:

1.4 Դաստիարակչական մասի ղեկավարը նպաստում է ազգային մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը:

1.5 Դաստիարակչական մասի ղեկավարը, համագործակցելով կուրսղեկների, սովորողների և ծնողների հետ իրականացնում է միջոցառումներ, նպատակային էքսկուրսիաներ և այլն: Նպաստում է սովորողների կողմից ուսումնական նախագծերի մշակմանը:

1.6 Դաստիարակչական մասի ղեկավարը համագործակցելով համայնքի հետ սերտ կապ է ստեղծում տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ նպաստելով բնապահպանական, մարզառողջարանային միջոցառումների համատեղ նախագծմանն ու կազմակերպմանը: Բարձրորակ մասնագետների պատրաստման գործընթացների կազմակերպման, ուսուցման բովանդակության կատարելագործման, մասնագիտական կրթության որակի ապահովումը:

2 ներկայացմամբ՝ քոլեջի կառավարման խորհրդի որոշմամբ:

1.6 Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է քոլեջի կառավարման խորհրդի որոշմամբ և վավերացվում է տնօրենի կողմից:

## 2. ՔՈՒԵԶԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Դաստիարակչական մասի գործունեությունն իրականացվում է քոլեջի դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից:

2.2 Դաստիարակչական մասի ղեկավարին նշանակում և պաշտոնից ազատում է քոլեջի տնօրենը:

2.3 Դաստիարակչական մասը՝

- ա) կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, մասնագիտական կողմնորոշման աշխատանքներն ու կուրսղեկների գործունեությունը.
- բ) ապահովում է Քոլեջի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը.
- գ) կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար.
- դ) Քոլեջի, նրա ստորաբաժանումների, մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն է ցույց տալիս ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում.
- ե) ընդհանրացնում և միջոցներ է ձեռնարկում դաստիարակչական գծով մանկավարժական աշխատողների արդյունավետ, սահմանված կարգով երաշխավորված փորձը տարածելու համար.
- զ) աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում հասարակական վերահսկողությանը.
- է) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ.
- ը) կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստում՝ կրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը.
- թ) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:

- ժ) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները.
- ի) համագործակցում է ծնողների հետ՝ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում: